

թողով Նարողէնի անկմամբն, և ապա քիչ ատենէն շարունակեց զայն Փրան- կիսկոս Ա:

Այդ կամարն ամբով սպիտակ մար- մարինէ շինուած է, հանեալ ՚ի պեղ- մանց Լակոյ Մաճճիորէի: Վեճնամեծ կամարէ մը ձեւացած է, ունելով կող- մական ուրիշ երկու կամարներ ալ ա- ւելի փոքր: Հոյակապ սիներն որովք զարդարուած է, կորընթեան են, խո- ղովակաձեք և միակտուրք: Մարգէզն բանեօլա իր այս գործովն մեծ անուն ժառանգեց գարուս ճարտարապետու- թեան մէջ:

Կամարին քաղքին նսյող կողման վրայ վեց ձիով կառք մը կայ, որուն մէջ կանգուն արձան մը կեցած է, ներ- կայացնելով զիալաղութիւն . որոյ

յորս անկեանց վրայ ալ չորս ձիաւորեալ կանայք կան. և ասոնք ալ կը ներկայա- ցընեն չորս յաղթութիւն: Հսկայածն արձանն որ կը տեսնուի ընծայական գրութեան աջակողմը՝ կը ցուցընէ Բոյ կետը, իսկ ձախակողմեանը՝ զիիշի. նոյ: կամարին երկու կողմերը թէ յաջ և թէ ձախ՝ կան գեղեցիկ խորագան- գակներ, ներկայացնելով նոյն ժամա- նակաց դէպքերը:

Այս յիշատակարանն որ բատ կար- ծեաց արուեստագիտաց կրնայ մրցիլ Յունաստանի և հնոյն Հռովմայ յիշա- տակարանաց հետ, հանդիսօրէն տո- նախմբեցաւ 1838ին, Աւստրիոյ կայ- սեր ֆերդինանդոսի Առաջնոյ թագըն- կալութեան ժամանակ :

Ո Ո Ւ Մ Է Լ Ի Ա Շ Խ Ա Գ Ր Ա Կ Ո Ն *

Դասնուրի ափանց մօտ եղած այն երկիր- ներն, ուր կը գտնուին հիմա Վալաքիա, Ռումելի, Մոլտավիա, Պեսարապիա, Պու- քովինա, Դրանելվանիա, Պանադ և Հուն- գարիոյ մէկ մասը, Դակիա կ'ըսուէին եր- բեմ: Դակիացիք քաջամարտիկ և աշխար- հակալութիւն սիրող ազգ մ'էին, որոց վրայ

1 Առաջին յօդուածը խառից աշխարհա- գրական Ընկերութեան հրատարակած առաջոյ առաջին երկամսեայ Ենթաթէն քաղեցինք, և գը- րողն ալ է Պ. Գունդաքուզենոյ, առաջն քար- տուլար Ռումելից քաղաքացիական դորձա- կամարին ի Հունգրի: Պ. Գոնդաքուզենոյ իր տուած մանեամսուն տեղէկութեանց մէջ՝ Ռու- մելից իրաքանչիր ազգութեանց աշխարհահա- մարն ընելով, չի մոռանար և զնայո, նշանակե- լով Հայ ժողովրդեան և իր եկեղեցեաց թիւը. և արժանապէն, զան զի շատ ժամանակն ՚ի վեր նշանաւոր եղած են Հայք այդ երկիրն մէջ: Բայց այդ գումարէն կ'իմանակը ցաւոք սրան որ Հայք զգալապէն նուազած են հան ինչ որ էնին ժա- մանակաւ, իսպանուելով տեղացուց հետ և գրե- թէ բոլորովն մանալով իրենց մայրէնին լեզուն, որ է զրոյմ ազգութեան: Փաստուիլի է մեջ ինչ պէս նաև ամեն ճայրենասէր անձն՝ որ Հայք ալ ուրիշ ազգաց նախանձէի օրինակին հետակալով. չանար ամեն կողմ պահէն անկրուաս նիք զնիքը. որ գարուս բնական և օրինաւոր մթութն է:

Խօսուած է ՚ի պատմագիրս մինչև Քրիս- տոսէ ՅՈՒ տարի առաջ: Ասոնք զէնք վեր- ցընելով հռովմէական մէկ քանի մերձակայ զալթականութեանց գէմ, մտածեց Յու- լիոս կեսար պատերազմի երթայ անոնց գէմ. բայց տարածամ մահն վրայ հանե- լով արգիլեց զՄեծ կայօրը ձեռք զարնե- րու բարբարասաց գէմ մտածած արշաւա- նաց, որով գուցէ գուռ կը բացուէր գա- նուբեան ժողովրդոց ՚ի քաղաքակրթու- թիւն:

Կեսարու մտածութիւնն արդիւնացուց Մարկոս Պլատին Տրայիանոս, ձեռք գտնե- լով այդ հետամսակման արշաւանաց Հատ անգամ յաղթեց Դակիացւոց, և քիչ մնաց որ պիտի ձեռբակալէր նոյնիսկիրենց Դակի- արլոս (Decebalos) անուն առաջնորդը: Աշ- րող Դակիան վարքը ըրաւ իր յաղթու- թեանցը, որուն տիրելով բազմաթիւ գաղ- թականութիւններ զրկեց հօն, ժողվելով խոսիոյ զանազան կողմերէն: Նոյն իսկ Դակիա անունը վերցաւ, և բառեցաւ այդ աշխարհն Երկիր Հռովմէական: Այս նոր տարերց՝ այն է զալթականութեանց ընորհիւ, այդ Երկիրը Հռովմէական մեծա- տարած կայսրութեան հարուստ ու զօրա- ւոր գաւառներէն մէկն եղաւ: Գաղթակա-

Նութիւնք ծաղկեցան մեծապէս, և նորունոր քաղաքներ շինուեցան, ինչպէս են Նիկոպօֆիս, Բալտոս, Սուչավա, Շերգրավա: Ընդամակ ջրմուզներ, մեծեաններ ու թարածներ բարձրացան, և Կարպաթեան լեռներն իրենց մետաղական մեծանորս հարստոթեամբն երկաթ ու պղնձն կը մատակարարէին: Այդ երկրին մէջ տիրող ցեղն հռովմէական գաղթականութիւնք եղան, և հոռովմէական լեզուն տարածուեցան շուտով: այն կողմէնը, որ և կը լսուի մինչ շայոր: Ուրեմն ամենայն իրաւամբ կրնանք Դանութիւն ափանց ժողովուրդներ ՚ի Հռովմայեցոց սերեալ համարիւ ինչպէս Յոնք ՚ի Հելլենաց:

Բնական աշխարհագրութիւն. — Քաղաքական Ռումելին որ կը բովանդակէ Մորտափոյ ու Վալաքիոյ հին գաւառները և Պեսսարապիոյ մէկ մասը՝ զոր յետս գարձոյ Ռուսիա Բարիգու 1856 տիմին մարտի 50ին գայնադրութեան զորութեամբ, կը նկայ Հիւսիսային լայնութեան 43,38,48° աստիճանին և արևելեան երկայնութեան 20,20,27° աստիճանին տակ: Արևելեան կալմանէ ունի սահման բրութ գետը, յարեւելից Կարպաթեան լեռները, և ՚ի հարաւոյ զիանուրք: Սահմանն գրեթէ բորբովին բնական է, և զետեղուուն է երկրին ընդ մէջ Աւստրա-Հունգարիոյ ՚ի հիւսիսոյ և յարեւմտից, Թուրքիոյ ՚ի հարաւոյ, և Ռուսիոյ յարեւելից:

Երկիրն կիսաբոլոր է ձևով, որոյ մէկ ծայրն կը չօպէի Կարպաթեան լեռները, և միան կ՚ի՞ննայ դէպ ՚ի Դանութիւն ափունքը: Գոգառն կողմէ Աւստրիոյ կը նայի գէպ ՚ի Դանունիվանի Վալուսինա, իսկ կորցնթարդ կողմը դէպ ՚ի Սերվիա և Խուրքիա, ուսկից կը բաժնուի Դանութ գետուն: Ռումելիոյ ամբողջական տարածութիւնն է 24,210,931 քոկն, կամ 15,577,463 զեկտար, այսինքն 6,125 քառակուսի փարսախ:

Ռումելիոյ բոլոր լեռներն Կարպաթեանց ճիշդերն են, և կրնան մրցիլ Եւրոպիոյ ամենէն բարձր լերանց հետ: Գլխաւորներն ասոնքն են.

Ի Վալաքիա.

Օլմոյ կամ Գարա-իման . . .	2650 մեդր
Բարանիու	2587 *
Բիադրա	2235 *
Դուդանա	2079 *

Գրան բ.

Ի Մոլտավիա.

Բիոն կամ Չէրլիւլ	2720 մեդր
Ուգէվադու	2600 *
Չուռուլ	2174 *
Ռարէուլ	2098 *

Բոլոր ջրոց ընթացքներն կը կախուին գըլխաւոր նաւարկելի գետեն՝ Դանութիւն, որ կը կորէ զերկիրն 120 փարստիէն աւելի երկայնութեամբ: Դանութիւնը բոլոր երկայնութեամբն նաւարկելի է ինչուան բաւական մեծութեամբ շղենմուղ նաւաց, որոյ խորութիւնն անել տեղ 70 ոտանչափէ ամելի է: Դանութիւնը գետն կը սնուցան շատ շը մեր կը ընթացից վրայ կը ձեւադնէ զանազան կղզիներ մինչև ՚ի կալաց, ուր կը սկըսի Դանութիւն տէլքան, և կը բամնուի երեք զանազան ճիւղեր: Դանութիւնը այս կէտիս վրայ շատ մը գծուարութիւններ ընդ առաջ կը հանէր ՚ի նաւարկութիւն, բայց եւրոպական մասնաժողովն իւրանաց Դանութիւնի, կրցաւ գարմանել զանոնք ըստ մեծի մասին: Այս գետոյն նաւարկութիւնն բաց է ամենայն աղբաց զրօնոց առջին, որոնք կը յաճախինեն՝ ծաղկեցնելով երկրին վաճառականութիւնն:

Դանութիւնը աւափուող գլխաւոր գետակներն ասոնք են. Ոլգ, որ Դրանսիլվանիայէն կը բղիլի Կարպաթեան լեռներէն անդին, զորոնք հաստանելով կը թափի Դանութիւն մէջ ՚ի Սլովա, 330 քիլոմետր միջօց տեղ կտրելէն ետքը: Սերէթ, որ Պուրովինայէն կը բղիլի, կը մտնայ ՚ի Մոլտավիա, կ'անցնի Ռոման քաղաքը, և Կալաց քաղաքին հարաւակողմը կը միանայ Դանութիւն հետ, 555 քիլոմետր միջօց տեղ ընթանալէն ետքը: Բրուն, որ Սերէթայ աէս Պուրովինայէն կը բղիլի, և կը թափի ՚ի Դանութիւնը կալաց և Ռինի քաղաքաց մէջ, կտրելով 400 քիլոմետր տեղ:

Դանութիւն ջրերէն ձևացած լճերէն զատ, կան ուրիշ շատ մը լճեր, ինչպէս են Պորչէա, Շաւլ, Գարդալ, Պովերլիու, Ժալբոնկ, Գարդլապուկա և Խիդայ: Աև ծովուն երկայնութեամբ կը գտնուին աղային լճեր ալ, ինչպէս է Ալասիք, Շակաւ, Պուրնա, Փուսլա, և այլն:

Երկրին կիմայն շատ փոփոխական է ըստ տեղեաց, ըստ որում պատսպարեալ են ՚ի լեռաց կամ անպատսպար մնացած Սև ծովուն հողմոց առջին: Ահա այս է միջին հային վեց տարուան միջօց, 1861էն մինչև 1866:

ԱՅՏԻՄԱՆՔ ՌԵԽՈՒԽԻԹԻ, ՄԱՐԴԿԱՅՆ, ՆԱԽԱՊԱԳԻՆ

1861 . . + 29,7	— 10,9
1862 . . + 27	— 12
1863 . . + 25,8	— 18
1864 . . + 22,1	— 12,4
1865 . . + 28	— 15,4
1866 . . + 50	— 19

Բնակիչք. — Ռումելյական ցեղին և լատին ծագման ամրողջական ժողովուրդն, Եթէ 'ի բուն Ռումելի և Եթէ 'ի զանազան կողմանն, ինչպէս 'ի Դրանսփլանիա, 'ի Պանագ, 'ի Պեսսարապիա, կը հասնի մինչև 10 միլիոնի: Բայց ասկէ 2,690,000 Աւարած-կոնգրեսից կը վերաբերի, 4,500,000 Բուրգից, և 1,000,000 Ռուսիոյ խակ անոնք որ կը կազմեն մի մարմին ազգային և անկախ, և կը ներկայացնեն բուն Ռումելիոյ ժողովուրդն, էին

1841ին	3,379,000
1850ին	4,000,000
1860ին	4,496,277
1874ին	5,000,000

Այս հինգ միլիոն բնակչաց վրայ կը նշանիէ աշխարհազիրն 2,880,000 այր և 2,420,000 կին. այսինքն 1000 հոգուց վրայ 516 արք և 484 կանայք, Եւ այս հինգ միլիոն ժողովրդեան մէջ կան նաեւ

Հրեայք	274,000
Հռովմէական ուղղափառք . . .	45,452
Բուրգականք	28,903
Լիոբանացիք	8,179
Հայք	8,179
Մահմետականք	4,323

Խակ օտար տէրութեանց համատակ ժողովուրդներն որ 51,427ի կը հասնին, այսպէս կը բաժնուին.

Աւտրիացիք	28,180
Ցոյնք	9,345
Գերմանացիք	3,658
Անգլիացիք	2,828
Բուրգիք	2,630
Գաղղիացիք	1,142
Իտալացիք	267
Զանազան ազգք	569

Բաժանունն հողական. — Ռումելի 53 գաւառ կը բաժնուի, 164 լիճակ և 2965 շր-

ջանակ, որոնք ստորաբաժանին 'ի բազա-քայինն և 'ի գիւղայինն. առաջնանքն 63 են թուով, և երկրորդքն 2913, գիւղայինը ըլք-ջանակը ունին 50 հազար գիւղ և աւան, դնենք հօս իրաքանչիւր գաւառաց ա-նունները, նշանակելով անոնց շինավայր քաղաքն ու բնակիչը.

Վարդարիա.

Գաւառ	Շբակացր	Բնակչութ
Խփով	Պուբրէշ	210,000
Մէհէտինդի	Աէվէրին	2,921
Կործիու	Դիրկու-ձիուլ	2,666
Վալէչա	Ոհմնիք	3,161
Արկէս	Բիսդի	7,259
Մուշէլ	Գամբու-լունկու	8,283
Տիմպորիցա	Դիրկովիսդի	5,401
Բրահորա	Բլուսդի	26,468
Պուզէու	Պուզէու	9,027
Ոհմնիք-Սերադ	Ոհմնիք-Սերադ	5,698
Պրայլա	Պրայլա	25,767
Եալումիցա	Ֆալարապի	3,947
Վլասբա	Ճիուրձիու	40,557
Դէլէօրման	Դուրնու-Մակու	(ըելէ) 2,978
Օլդ	Ալարինա	3,337
Ռոմանադի	Գարաբալա	5,638
Տուճիու	Գրայովա	21,524

Մոլտաշիա.

Գաւառ	Շբակացր	Բնակչութ
Եաշ	Եաշ	90,236
Բուգնա	Ֆոդշան	16,939
Պաքառ	Պաքառ	12,440
Նեամց	Բիամդրա	16,353
Ռոման	Ռոման	14,981
Սուչավա	Ֆոլդիսենի	12,584
Պոթուան	Պոթուան	37,594
Դէրուչիու	Դէրուչիու	8,633
Խամայիլ	Խամայիլ	20,869
Գովուրլուփ	Կալադի	36,107
Դուգովլա	Պէրլատ	18,251
Վալուիի	Վալուիի	6,547
Ֆալշիու	Հուսի	17,697
Գահուլ	Գահուլ	6,906
Տորոհոյու	Տորոհոյու	8,364
Պողկրատ	Պողկրատ	13,937

Բատ 1866 ամին Պուբրէշի վիճակագրութեան Պաշտօնարանին հրատարակութեան

տամուսնացելոց գումարն էր 31,000, հնելոց գումարն 147,332 և մեռելոց 111,963: Այս գումարին միջն 44,979 հոգիք 5 տարեկանէ վար մեռեր էին, 5511 հոգիք 70 տարեկանէ 80 տարեկան, 1992 հոգիք 80 տարեկանէ 90 տարեկան, 665 հոգիք 90 տարեկանէ 100 տարեկան, վերջապէս 212 հոգիքավ 100 տարեկանէ անդին: Ընդ ամենն 8429 հոգիք 70 տարեկանէ վեր մեռեր էին:

Բերք. — Ուսմելիոյ բերոց գլխաւոր ազգին հողագործութիւնն է, վասն զի երկիրն ի բնէ արգաւանդ ըլլարւն, առատ բերք կը մատակարարէ: Հողագործական բերքերէն զատ ունի շատ մը հարուստ հանքեր ու հանածոյներ, ինչպէս է կորալու

ձձըմբական, զառիկ, կապար, երկաթ, ոսկի, ծծումբ և տեսակ տեսակ հանքային աղեր:

Հողագործութեան գլխաւոր բերքերն են՝ ցորեան, եգիպտացորեան, հաճար, գարի, վարսակ, կուտ, կանեփ ու ծխախոտ:

7,574,362 բոկոն անբեր երկիր ունի, 4,029,947 բոկոն անտառապատ երկիր և 12,636,618 բոկոն ալ բարեբեր երկիր: Այս վերջին գումարն ստորաբաժանի այսպէս:

Երկիրը մշակեալք	4,442,924 բոկոն
Պարտէզք պտղագործք	308,477 »
Մարգագետինք	4,848,775 »
Արօտավայրք	5,845,435 »
Այգեստանք	191,307 »

ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԻՒՆԻՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԲԵՐՈՒԹԻՒՆԻՆ 1870 ԱՄԻՆ

Յորենականք.

ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Ցորեան	157,111,539
Եգիպտացորեան	77,960,532
Գարի, վարսակ	14,861,624
Հաճար, կորեակ	6,926,277

ՎԱՃԱՌԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն տարուան ներս եկած ցորենականաց գինն է գրեթէ 5,846,150 դահեկան. առանձին ներս մոտած ցորենոյ գինն է 5,421,500 դահեկան:

Կենդանեիք.

ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Եղք	8,239,446
Խոյք	4,817,361
Խողք	8,847,206
Երիկարք	1,292,920

ՎԱՃԱՌԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Եղք	745,437
Զուկք	5,723,977
Խողք	906,092
Երիկարք	283,960

Կենդանեկան բերք.

ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Բուրդ	18,258,879
Ճերամ	8,965,734
Կաշի եղան	3,419,206
Ճարպ	1,319,012
Շղեղ	1,961,523
Կաշի սեագոյն գառան	2,668,592

ՎԱՃԱՌԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Կերպարք բուրդէ	14,647,090
» մետաքսէ	8,789,241
Կաշի	6,411,973
Մուշտակք	4,412,100
Հանգերձք	41,730,203
Մոմեղէնք	2,488,403

Բուսական բերք.

ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Բնդեղէնք	84,488
Փայտեղէնք	2,674,109
Լուրիա	84,128
Ալիւր	2,453,521
Քոլցա	2,949,453

ՎԱՃԱՌԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Բնդեղէնք	747,544
Փայտեղէնք գործեալք	688,055
Զէք	4,104,041
Շաքար	8,453,516
Պտուղ և քաֆֆէ	8,767,714
Ալիւր և ըմպելիք	3,065,584

Հանքային բերք:

Վաճառահանութեան	Վաճառաբերութեան
Աղ հանքային	3,031,750
Հանք գործեալք	10,627,170
Գարածիւթ	4,451,926
Ջեթ	9,514
Երկարթ	4,583,884
Հանք գործեալք	10,627,170
Ջինկ, պղինձ	2,650,626
Երկաթագործ նիւթք	9,239,184

Ամենայն ազգաց վաճառականական նաւերն կը հանդիպին Ռումելիոյ նաւահանգիստներու, Աշա այս է բայս գրօնուց այն նաւաց թիւն՝ որ մեկան 1872 տարւոյն մէջ, Յոյն 1610, Օսմանեան 608, Խոալական՝ 547, Աւտորա-Հունգարական՝ 518, Բոնիական՝ 291, Անդղիական՝ 243, Ռում 154, Գաղղիական՝ 109, Հունաստական՝ 55, Գերմանացի՝ 24, Աննովերացի՝ 17, Շուետ-Նորվեկիացի՝ 14, Բրուսիացի՝ 11, Սերպիա-Օլտենապուրկեցի՝ 5, Մելեխմասուրկեցի՝ 4, Այերիկացի՝ 5, Տանիմաբրացի՝ 1.

Ռումելիոյ մէջ հազիւ քանի մը տարի է որ սկըսած են երկաթուղիքի բայց հիմա Հայորդակցութեան ճամբաներն օր քան զօր երթալով կը բարգմանան, մանաւանդ շրջակայ տէրութեանց, և զիմաւորապէս Աւտորա-Հունգարիոյ ճետա: Եւ երբ աւարտի յարաբերութեան այս վերջին գիծն, Ռումելի անցուղարձի գլխաւոր ճամբաներէն մէկը պիտի ըլլայ ընդ մէջ Այլենելից և Արևմտից: Եղած գիծերն որ մաս մի տէրութեան կը վերաբերին և մաս մ'ալ արտաքին կամ ապդային ընկերութեանց ասոնք են. 1. Պուրբեչէ ՚ի Ռուման (468 քիլոմետր). 2. Դերուչէ ՚ի Ուէրլատ (30 քիլոմետր). 3. Փիդիէ ՚ի Թիգետի (98 քիլոմետր). 4. Ֆիդեստիէ ՚ի Սահմանածայրս Աւտորիոյ. 5. Պուրբեչէ ՚ի Ճուրճեվոյ (60 քիլոմետր). 6. Սուչավայէ ՚ի Ռուման (224 քիլոմետր). 7. Դիրկովիստէն ՚ի Բերիքէ (30 քիլոմետր). 8. Եաչէ ՚ի Բրութ:

Դաստիարական. — Ռումելիոյ այժմեան օրէնսդրութիւնն Կարուզոնի Օրինագրոց վրայ հիմնեալ է, եղանակակառորելով ու յարաբերով զայն երկրին աւանդութեանցը և սովորութեանց: Մահուան պատմին ջնշտած է շատ ժամանակէ ՚ի վեր, բայց զօրութեան մէջ եղած ատենն իսկ երբէք մահուան դատակնիբ տրուած չէր այդ երկրին մէջ, վասն զի անկարիլի կ'ըլլայր ու բարգործ մը գտնալ: Դատողական մարմոնը գլուխն վճռոց ջնջման ծայրագոյն Ասեանն է (Corte di Cassazione), որ Պու-

բրէշ կը նստի և կը բաղկանայ 17 խոր-հըրդականներէ:

16 բանորդ կան՚ի Ռումելիի, և արգելեալքն գրիթէ 5000 կը հաշուկին: Բուռն աշխատութեան դատապարտեալքն հանքաց մէջ կը գործածուին, որոց մեծագոյն մասը 20 կամ 30 տարուան երիտասարդներ են:

Կրօնք. — Ռումելիոյ մէջ տիրող գլխաւոր կրօնքն յունական պաշտօնն է, 8 թեմբ կը բաժնուի, որոց երկուքն արգելեակոպոսականք են և աթոռանիստ քաղաքներն են Պուրբրէշ ու Եաչ, և վեցն եպիսկոպոսականք: 42ի չափ մենաստանք կան և 119 արքայութիւնք:

Կրօնական մասնաւոր կրթութիւնն ութ կրերանցաց մէջ կը տրուի: Կան ՚ի Ռումելի 6858 եկեղեցիք և 9702 քահանայք, ինչպէս նաև հոռմէւական երկու եպիսկոպոսունք, առաքելական փոխանորդ տիտուով:

Դարձեալ կրօնից ազատութիւնն ըլլարուն, կան 176 սինակուայք, 63 ուղղափառ եկեղեցիք, 11 Հայոց համար, 7 Ղիբովանցոց և 12 տաճարք բողոքականաց:

Հասարակաց կրթուրիւն. — Կախնական կրթութիւնն պարտաւորիչ է երկուց սեռից ալ: Ռումելիոյ մէջ 1975 գիւղական գլորոցք կան, 1891 մանկանց համար և 84 օրիորդաց: Դպրոց յաճախող մանկանց թիւն է 55,985 գիւղական գլորոցաց և 26,160 քաղաքական առաջնակարգ գըպոցաց մէջ բայց ասոնցմէ կան 14 գարձարաններ, 7 լիկէոնք, յորոց երկուքն Պուրբրէշ, 1 ՚ի Եաչ, 1 ՚ի Կրայովա, 1 ՚ի Պուրպան, 1 ՚ի Ուէրլատ, 1 ՚ի Պուլկրատ: գլորոց մի վաճառականութեան ՚ի Պուրբրէշ, 3 գլորոցք արուեստից և երկու գեղարդուեստից: Կայ ՚ի Պուրբրէշ Համալսարան մ'ալ, և ունի չորս աթոռ զանազան ուսմանց: օրէնսդրութեան, գլորութեան ու իմաստասիրութեան, ուսողական ու ընական գիտութեանց, բժշկականութեան և գեղագործութեան: Ունի գարձեալ այս

քաղաքն Երկրագործութեան և ճարտարապետութեան դպրոց մը: Կան ՚ի Եսալ Երեք աթոռք ուսմանց, օրէնսդիտութեան, բնակն զիտութեանց, և գլուխութեան ու իմաստասիրութեան:

Այս մանաշյուրին. — Բարիզու 1865 ամին օգոստոսի 19ին ժողովը կարգաւորեց որու կերպով երկուց իշխանութեանց կառավագործինք՝ առաջարկելով ապագայ միութիւն: Այս միութեան դրոքը կատարուեցան միակ իշխանի մը ընտրութիւնէն ետքը, Ալեքսանդր Յովհաննէս (գնդապետն Քուզա): Պուրքէ մայրաքաղաք ընտրուեցաւ, Հանդերձ միով կառավարութեամբ, միով պաշտօնարանիւ, և միով օրէնսդիր ժողովող: Նոյն օրէն սկսեալ միացեալ իշխանութիւնքն կազմեցան ՚ի մի տէրութիւն անբաժանելի Ծումէլի անուանիք: Տասը տարի անցնելէն ետքը Քուզա իշխանն հրաշարեցաւ և ազգային քուէարկութեամբ իշխանական թագն կարուսի Ալեքսանդր տրուեցաւ, որ Կիչիսէ այժմ, և է ՚ի տանէ Հոկենձուլլերնի:

Իշխանին սահմանադրական իրաւունքներն ժառանգական են ուղիղ և օրինաւոր յաջորդութեամբ արական սեռի մէջ: Որ

եթէ պակասելու ըլլայ ուղիղ գծով, գահն եղարաց մեծագունին կը ընկնայ և իր որդւոց: Խիսանին անձ անբռնաբարելի է: պաշտօնեայք պատասխանատու են Խիսանն կ'անուանէ և յետ կոչէ իր պաշտօնեաները, ինքն կը սահմանէ և կը հրատարակէ գորէնս, և կ'անուանէ ու կը հաստատէ ամեն հասարակաց պաշտօնեաները:

Ինքն է բանակին գլուխը, դրամոյ կնիքն, և սատր աէրութեաց հետ գանձագրողն: Իրաւունք ունի ժողովելու արտաքոյ կարգի Ազգային ժողովը, և լուծանելու զանոնք ուրոյն ուրոյն կամ միանգամայն:

Տէրութեան իշխանութիւնները. — Տէրութեան բոլոր իշխանութիւնն ազգէն կը բըղի: Օրինադիր իշխանութիւնն Ազգային ներկայացուցման և իշխանին պահեալ է: Ազգային ներկայացուցման ժողովն երկուքի կը բաժնուի. Ծերակոյտ և Երեսպորանաց սենեակ: Ամենայն օրէնք կը պահանջեն երկուց օրէնսդիր ժողովոց հաւանութիւնն և իշխանին վաւերացաւմը:

Այս է ահա համառօտիւ Դանուբի ափանց երկրին վիճակը, որոյ քաղաքական ինքնիշխանութիւնն երաշխաւորեալ է ՚ի Գալանգրաց 1865 ամին:

ԵՓՐՍ.Ս ՈՒ ՏԻԳ.ՐԻՍ Ս.ՇԽ Ա.ՐՀԱ.Գ.ՐՍ.Կ.Ս.Ն ՈՒ ՏՆՏԵՍՍ.Կ.Ս.Ն

Պ. Էշբախ (Eschbach) ճանապարհուրդն անցեալ տարւոյն մայիս 23 թուականաւ հետաքրքրական նամակ մը կ'ուղղէ ՚ի Կ-Պօլոյ՝ էքտօնօմիսադ Ֆրանենէ անուն լրագրին, ու կը հրատարակուի յունիսի 6ին, որուն մէջ Տիգրիս ու Եփրատ գետոց նաւարկութեան ու տեղայութեան վրայ աշխարհագրական ու տնտեսական ընտիր տեղեկութիւններ գտնալով՝ կը քաղնք այս յետագայ յօդուածովս, որ կը նայ ախորժելի անցնիլ, իբր զի Եփրատ ու Տիգրիս մեր հայրենեաց սահմաններն են:

« Բննենք Տիգրիսի նաւարկութիւնը Տիգրակէքիլէն մինչև ՚ի Մուսուլ և ՚ի Պաղտատ: Թէպէտ և զետն այնչափ

յորդաջուր չէ ՚ի Տիգրակէքիր, սակայն կը ձգուին քէկէքներ, որոնք կ'իջնան մինչեւ ՚ի Պաղտատ: Այս նորածեն նաւարկութիւնն ստվորական է հիմա բուլը այս կողմերը: Երբոր բարձր է գետոյն ջուրը, քէկէք մ'երեսուն ժամուան մէջ կը նայ իշխան Մուսուլէն ՚ի Պաղտատ:

« Փորձեցին տեղափոխութեան այս վաղեմի ոճոյն տեղ կանոնաւոր նաւարկութիւն մը հաստատել: Շողեմուղ նաւ մը գէպէ ՚ի վեր ելաւ ՚ի Տիգրիս Պաղտատէն մինչև այս ինչ հեռաւորութեամբ Մուսուլի, և կը ցաւ հասնիլ մինչև ծանօթ կէտ մը դրունք Ներքովրայ կոչուած: Ազարական զրոյցն տալրեկ աւանդութիւն ունի այս անձին վրայ քան ինչ որ է սրբազն ա-